**_ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ_**

*Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 3-րդ կետով՝* ***ո ր ո շ ու մ եմ.***

*1. Սահմանել Արցախի Հանրապետության կառավարության հետևյալ կառուցվածքը.*

*1) պետական նախարար.*

*2) աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն.*

*3) առողջապահության նախարարություն.*

*4) արդարադատության նախարարություն.*

*5) արտաքին գործերի նախարարություն.*

*6) գյուղատնտեսության նախարարություն.*

*7) էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն.*

*8) կրթության, գիտության և մշակույթի նախարարություն.*

*9) պաշտպանության նախարարություն.*

*10) ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն.*

*11) տարածքային կառավարման և զարգացման նախարարություն.*

*12) քաղաքաշինության նախարարություն.*

*13) ֆինանսների նախարարություն:*

*2. Սահմանել Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների հետևյալ կառուցվածքը.*

*1) ազգային անվտանգության ծառայություն.*

*2) արտակարգ իրավիճակների պետական ծառայություն.*

*3) բնապահպանության կոմիտե.*

*4) կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե.*

*5) Հայաստանի և սփյուռքի հետ ինտեգրման կոմիտե.*

*6) ոստիկանություն.*

*7) պետական եկամուտների կոմիտե.*

*8) պետական վերահսկողական ծառայություն:*

*3. Արցախի Հանրապետության կառավարությանը՝ մեկամսյա ժամկետում ընդունել սույն հրամանագրից բխող որոշումներ:*

*4. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՆՀ-103-Ն հրամանագիրը:*

*5. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:*

***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

*2020 թ. մայիսի 26*
*Ստեփանակերտ*
*ՆՀ-3-Ն*